

Ա Ջ Դ

Աշխատասիրութիւնս սկսաւ հրատարակուիլ Հանդէս Ամսօրեայի 1911 տարւոյ Յունուարի թուին մէջ (էջ 1) եւ աւարտեցաւ 1914 տարւոյ Դեկտեմբեր թուով: Ասկէ հանուած է այս առանձինն տպագրութիւնը, որուն մէջ յաւելուածներ եւ ուղղութիւններ եղած են, եւ այս պատճառաւ սոյն հրատարակութիւնս է գործածելին: Ի մասնաւորի մտադիր կ'ընեմ գործոյս վերջը դրուած Յաւելուածքին վրայ, ուր կը գտնուին գործոյս եւ նախորդ հրատարակութեանս (Կենսագրութիւն Սարգիս Արքեպ.ի Սարաֆեան 1908) վերաբերեալ տեղեկութիւններ եւ վաւերագիրներ, որոնք կը լուսաւորեն եւ կը հաստատեն նոյն Կենսագրութիւնները:

Հրատարակութեանս շարունակութիւնը՝ Կենսագրութիւններ Բ., ըստ մեծի